



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս. ԼՈՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ



Եր հնագույն ազգային-եկեղեցական սրտառույշ և բազմաբովանդակ ավանդություններից մեկն է Լուսավորչի կանթեղի ավանդությունը, որին հավատացել է մեր ժողովուրդը իր հոգու բովանդակ ջերմությամբ, երկյուղածությամբ, դարե՛ր և դարե՛ր, և ավանդելով այն սերունդե սերունդ հասցրել մինչև մեր ժամանակները:

Այդ ավանդությունը, հայ հավատի այդ բանկազին մասնիկն ու գանձը, լեռներից բխող վնիտ աղբյուրի նման անխառն, հաճախ ու ամբողջական հասել է մեզ:

Լուսավորչի կանթեղի ավանդությունը հայ հավատի ամենաշնաղ ժողովրդական ստեղծագործություններից մեկն է, որի մեջ հայ հավատացյալ ժողովուրդը դրել է իր բազմադարյան գոյության, լինելության և հավերժության խորհուրդը, իր վառ հավատը, իր մեծ սիրտը, իր բաղձանքները լավագույն ապագայի նկատմամբ, իր բովանդակ հոգին, իր կյանքի և պատմության փիլիսոփայությունը:

Այդ ավանդությունը, որը հավերժորեն կապված է Լուսավորչի անվան հետ, խառնում է հայ հավատի, հայ բարեպաշտության: Հայ ժողովուրդը 1.600 տարիներ անընդհատ շարունակել է հավատալ և այժմ էլ հավատում է Ս. Լուսավորչին և նրա կան-

թեղին, որովհետև այս երկուսի մեջ մարմնավորվել է մեր անցյալ կյանքի ողջ գեղեցկությունն ու բանաստեղծությունը:

Գեղեցիկ է այդ ավանդությունը իր պարզության և ամբողջության մեջ, որի հիման վրա մեր ժողովրդի համոզմունքների և կրոնական գիտակցության մեջ արմատավորվել է այն սրտառույշ հավատը, որ կես գիշերին, Արագածի կատարից կախվում է մի անմար կանթեղ՝ Լուսավորչի անվան, առանց պարանի, որը լույս է տալիս «հայոց մրնաձ երկնքին», երկա՛ր ու ձի՛գ դարե՛ր: Կանթեղի մեջ ձերթի տեղ վառվում են մեծ Սբբի մաքուր արցունքները: Երկնամերձ այդ կանթեղին մարդկային ոչ մի ձեռք չի կարող հասնել, և այն չի կարող հանգցնել անգամ վիշապ Բամին, որ սուրում է Արագածի գագաթին: Նա անտեսանելի է պարզ մահկանացուներին, բայց ով անմեղ է հոգով, սիրով լիք սուրբ սիրտ ունի և վառ հավատով, անբեկանելի հույսով նայում է դեպի հայոց ապագան, նա միայն կտեսնի երկնքից կախված այդ մշտավառ ջահը, որը կարծես Աստծու պայծառ աչքն է ցած իջած երկնքից, հսկելու հայոց աշխարհին և հայ ժողովրդին:

Արագածի կատարից հավերժորեն կախված այդ կանթեղը ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՆԹԵՂՆ է, որ լույս է առնում մեծ Լուսավորչից ու լուսավորում հայ ժողովրդի

նոցին և նրա հայրենի կապույտ երկնակամար հազարամյակներով: Այդպես է հավատացել և դեռ այդպես էլ հավատում է հայ ժողովուրդը Լուսավորչի միշտ պլպլացող կանրեղին: Այդ հավատարմարժ կանրեղի վե՛ր լույսը դառն շարունակ կարել է հայ հոգու վրա: ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՆՆԻ ԼՈՒՅՍՈՎ ՎԱՌՆԷՆ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԳՈՐԵՐԻ ԳԻՄԱՆ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՆՇԵՋ ԽՍՐՈՒՅԿԸ, Բանի այն վառող Ս. Աշք հովանի է եղել հայ ժողովրդին: Լուսավորչի կանրեղի լույսով անցել է մեր ժողովուրդը իր աշխուժառ հանապարհը, տարվել է, նահատակվել, բայց մշտապես կենդանի է մնացել, կարողացել է իր նահատակությունը վերածել հաղթանակի ու կյանքի, և Լուսավորչի կանրեղի լույսի տակ կերտել և ստեղծագործել է իր մշակութային, հոգեկան անկորնչելի արժեքներն ու գեղեցկությունները, զարգացրել է իր դասական լեզուն, հռչակապատենագրությունը, բարձրացրել է իր սթանդիկի նարտապետությունը, որովհետև նրա հոգում չի մարել երբեք Լուսավորչի կանրեղի լույսը, Լուսավորչն է հանդիսացել «լույս ամենայն բարեաց և հիմն կենաց յախտենականաց» (Հովն. Նրզնկացի):

Մեծարանքի և երախտագիտության ամենաշեղծ զգացմունքներով է կապված եղել մեր ժողովրդի սիրտը Լուսավորչի և նրա զանի հետ: Լուսավորչի սուրբ անունն ու հիշատակը նվիրական ու բանկ են եղել հայ ժողովրդի համար: Նա է հանդիսացել ՀԱՅ ՀՈՂՈՎՈՐԴԻ ՄԵՄ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ, հայրը՝ Հայաստանյայց վերածնյալ լուսածին զավակների, մեր ժողովրդի հոգևոր ծնողը, հոգենվեր դաստիարակը, բաբխոսն ու լուսավորիչը իր աստվածաբարբառ խրատներով. «Գրել ձեզ և ուսուցանել կամիմ, եղբարք իմ և որդիք, զոքս ի Քրիստոս Առնարանան ծնայ» (Հանախապատում, գլ. Ժէ):

Ս. Լուսավորիչը մեր առաքելաշափիղ եկրորդ Լուսավորիչն է հանդիսացել Ս. Թադևոս և Ս. Բարբողիմեոս առաջալսներից հետո, որ հայ ժողովրդին բերեց հոգևոր վերածննդյան սուրբ պատգամները, Բրիտանեության լույսն ի Հայաստան աշխարհ. «Առաւել ևս զիւր վիճակն, զՀայաստան երկիր լուսաւորէր» (Ագաթ.): Իր ժամանակից հետո

ևս նա իր վարդապետության, հավատի կանրեղի լույսով հանդիսացավ «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն», ինչպես նաև բնութագրում է Խորենացին:

Լուսավորիչն իշխում է մեր դասական եկեղեցական մատենագրության բոլոր դարերի վրա: Այս զգացումը վառ է եղել 1.600 տարի հայոց սրտերում: «Մի է հայրն մեր, մի և միակրօն ազգն հայոց, և ի միոյ ծնողէ բազմութիւն զաւակաց ծնան» (Նրզնկացի):

Մեծ է երախտիքը Լուսավորչի մեր նկեղեցական տարեգրության մեջ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կենտրոն դարավոր ու պատմական Ս. Էջմիածնի հիմնադրումը նմանապես կապված է պատմականորեն Ս. Լուսավորչի անվան և աստվածահրաշ տեսիլի հետ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, ըստ միաձայն վկայության մեր պատմիչների, հիմնվել է 303 թվականներին, Ս. Լուսավորչի տեսիլի համաձայն. «Հրամայեցաւ նմա (Լուսաւորչի) ի տեսլացոյց հրեշտակէն, երէ «Շինեսցիւր զՏաճար անուանն Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղութն՝ ուր սիւնն հրեղէն ունէր զօսկի յառիսխն... և տեղին այն լիցի Տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և ԱԹՈՒ ՔԱՆԱՅՈՒԹԵԱՆ» (Ագաթ.):

Ս. Էջմիածինը մարմնացումն է Լուսավորչի լուսեղեն տեսիլին, իսկ հայ ժողովուրդը՝ զավակը նույն լուսեղեն երազի:

Ս. Լուսավորիչ... Ս. Էջմիածին...

Մեր ժողովրդի պատմական անցյալում չկան հայ սրտերն իրար միացնող ուրիշ այնպիսի համազգային սրբություններ ու խորհրդանշաններ, ինչպիսին Լուսավորիչն ու Ս. Էջմիածինն են: Այս երկու համբուրելի և պայծառ անունները խորհրդանշել են հանդիսացել հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնության, ազգային արժանապատվության, կրօնական գիտակցության: Ս. Լուսավորիչն ու Ս. Էջմիածինը նվիրական ու բանկ են եղել ամեն մի հավատացյալ հայ սրտի համար: Հայ ժողովուրդը, ուր ուր էլ գտնվել է, Հայրենի հողի վրա րե հեռավոր պանդխտության ավերում, ազգային հպարտության ամենաանկեղծ ու վառ զգացմունքով, իր հոգու բովանդակ ջերմությամբ կապ-

ված է եղել Ս. Էջմիածնին և հարազատ զավակը, հոգևոր ծնունդն է հանդիսացել Ս. Լուսավորչի: Եվ այդ պարզ պատահականություն չի եղել: Ս. Էջմիածինը իր պատկանելի հնությունը, հայ կյանքում կատարած իր ազգային, եկեղեցական, մշակութային-պատմական դերով, հանդիսացել է հայ հավատացյալ ժողովրդի ամենավերական ուխտավայրերից հնագույնն ու համագայինը: Ս. Էջմիածինը՝ հայության այդ նվիրական ազգային-եկեղեցական կենտրոնը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծագման ու հաստատության այդ սուրբ խանձարուրը, «հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով... Ս. Էջմիածինը հանդիսացել է հայի ստեղծող միտքը, լուսավորված քրիստոնեական երկնային լույսով՝ ստեղծել է գրականություն և արվեստ, ներկա հայի փառն «պարծառներ» (Գևորգ Զ):

Ս. Էջմիածինը խտացումն է հայ հոգու քոիչի, խորը հավատի, բարեպաշտության: Նա հայ հոգու փառեղեն երգն է, աղոթքն ու մրմուռը. «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Ժողովուրդների կյանքում սրբություններ կան, նվիրական վայրեր, որոնք սերտորեն կապված են տվյալ ժողովրդի պատմության հետ, նրա կյանքի, կրոնական զգացմունքների, նրա սրտի և հոգու հետ: Այդպիսին է Էջմիածինը հայ ժողովրդի համար: Քրիստոնեական ոչ մի եկեղեցի մի ուրիշ ժողո-

վրդի կյանքում այնքան բախտորոշ ու պատմական դեր չի կատարել, որքան Ս. Էջմիածինը հայ ժողովրդի կյանքում, նրա պատմության ողջ ընթացքում:

Այսօր էլ չի ավարտվել Ս. Էջմիածնի դերը հայ կյանքում, փանի վառ է Լուսավորչի անշեջ կանթեղը հայ հոգիներում և հայ երկնակամարի վրա: ՀԱՎԱՏՐ՝ ՔՐԻՍՏՈՍԻՅ, ԼՈՒՅՍՐ՝ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՅ:

Եվ չի պակասել ու չի պակասի երբեք հավատի սրբազան հուրը հայ հոգիներից և Լուսավորչի կանթեղից՝ մաքուր ձեռք:

Հայ երախտագետ ժողովուրդը սերունդներով հարգալից զլուխ է խոնարհել Լուսավորչի կանթեղի և Ս. Էջմիածնի լուսեղեն խորանների առաջ, որովհետև «այն մեր հոգու լուսո ջահն է նվիրական, ողջուն ազգի կենդանության երաշխիք. և այն նրազն, եղբայր, անշեջ կլինի, փանի վառող Աշն է մեզ միշտ հովանի»:

Այսօր ավելի քան մի այլ ժամանակ լուսապայծառ փողփողում է Ս. Լուսավորչի անշեջ և վնիտ կանթեղը հայ հավատացյալ հոգիներում և հայոց երկնակամարում, որովհետև իսպառ հեռացել են «հայոց մրեած երկինքներն ու գիշերները» և մնայուն նոր այգ, նոր արշալույս է բացվել Հայրենի հողի վրա և Ս. Էջմիածնի վերև: Լուսավորչի կանթեղի լույսը դարձել է ազատության, երջանկության, նոր կյանքի կենսատու այգաբաց...:

«Խաբեք եկան, դարեր անցան, Էջմիածին, Քո հիմն անշարժ և անսասան, Էջմիածին»:

